

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ
17 հուլիսի, 2020 N 42

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 16-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Մուսայելյան Նարեկ», ք.Մարտունի, Օգոստոսի 17 փող. 7/1 (ՀՎՀՀ 91430045).
- 2) Ա/Ձ «Քոչարյան Հրանտ», ք.Մարտունի, Օգոստոսի 17 փող. 6 (ՀՎՀՀ 91439977).
- 3) Ա/Ձ «Պետրոսյան Գյուլվարդ», ք.Մարտունի, Օգոստոսի 17 փող. 11 (ՀՎՀՀ 91436558):

2. ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ